

Փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանի այցը Կոշ համայնք

Փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանը հոկտեմբերի 16-ին այցելեց Կոշ համայնք : Համայնքապետարանում տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ քննարկվեց տեղական բյուջեի կատարման ընթացքը, եւ այն արդյունավետ կազմակերպելու համար որոշակի քայլեր ձեռնակվեցին:

Նշվեց, որ եկամուտների հավաքագրումը պետք է կատարվի հավասարապես, եւ այդ գործընթացից չպետք է դուրս մնա եւ ոչ մի բնակիչ: Մասնավորապես , շեշտադրվեց առավել մեծ եկամուտներ ունեցող եւ հարկային մեծ պարտավորություններ ունեցող անձանցից հավաքագրումների ապահովումը:

Փոխմարզպետը նշեց, որ այս գործընթացը մարզպետ Սարգիս Սահակյանի անմիջական ուշադրության տակ է, եւ համայնքի ղեկավարը պարտավոր է լիարժեքորեն կատարել իրեն վերապահված պարտադիր լիազորությունները: